Ռափայել Պատկանյան

Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ

Շուշա՛ն, շուտով դեմքդ ծածկե՛, ձյուն դու թվի՛ր մըրոտած.
Տե՛ս, սիգաձեմ ման է գալիս հայ աղջիկը մեր կըրթած.
Վարդի գույնը уж не в моде: то-ли дело бледный лик!
Այստեղումը бледный են դիփ հա՛մ աղջկունք, հա՛մ կնանիք:

Ի՞նչ է գաղտնին бледныйության, այդ հայտնի չէ՛ ոչ ոքին:
Միայն կասեն, որ շատուց է կավիճն ունի բարձր գին:
Առավոտ է, մեր աղջիկը հայլիից չի հեռանում,
Նորա ծընողք այսօր ճաշի гвардеец են ըսպասում.
Гвардеец է, լա՛վ միտք արեք, Հայ չէ՝ անշնորհ ու տըգետ,

Гвардеец է՝ փայլուն շորով, ուսին դըրած эполет.
Տուն կըմտնի, գըլուխ կըտա այնպե՛ս սիրուն, շնորհաշուք,
Որ մեր կըրթած հայ աղջըկա սիրտը կանե тук-тук-тук!
Էնդուր համար նա հայլիից օրն ի բուն չի պուկ գալի,
Гвардеец-ին դուր չի գալը խիստ է նորանը ըզգալի:

Ո՛չ լոկ դեմքով պիտի դուր գա, այլ և անուշ խոսքերով,
Ինչպե՛ս, ի՞նչ կերպ, դուք կը հարցնեք, այդ էլ չըգիտե ոչով:
Բարձի տակը պահած ունի նա George Sande–ի roman-ը
Գիշերները մորից թաքուն կարդում է մինչ չորս ժամը.
Անհատական այդ աղբյուրից նա քամում է անդադար

Սիրո զգացմունք, սիրո խոսքեր կանանց սրրտին մրխիթար:
Նա գրտավ յուր идеал-ը, այսօր ճաշին կրտեսնե
Նա յուր անտես սիրահարին, ում որ սիրտը տվել է:
Հայո՛ց աղջիկ, Հայո՛ց աղջիկ, գնա՛ առաջ, մի վախիլ,
Бледный դեմքրդ, շինծու խոսքրդ ովի՞ն ասես չեն խաբիլ:

Гвардеец-ին դուր չես գալի, ի՞նչ ափսոսանք, ի՞նչ վնաս,
Քեզ սիրահար гусар, улан, артиллерист կունենաս:
Դու փո՛րձ փորձե նորից դուր դալ, անույշ ժպտա՛ ու խոսե՛,
Քրսանմեկրդ արդեն մոտ է, տե՛ս, առաջիդ մեծ փոս է:
Բայց մի՛ թողնիլ դու George Sande-ին, идеал-իդ մի՛ ուրանալ.

Թե ոչ ջահիլ, գոնե ծերուկ կառնե քեզ ռուս генерал.
Բայց զգուշացի՛ր դու հայերից, գին չեն դնիլ, չեն սիրիլ
Քեզ, ինչպես դու ցանկանում ես. դու քեզ Հային մի՛ մատնիլ:
Փորձ փորձեցիր ու դուր չեկար ո՛չ улан–ին, гусар-ին,
Քրսանհինգրդ մոտենում է. Հա՛յ աղջիկ, վա՜յ քու հալին:

Հայո՛ց աղջիկ, Հայո՛ց աղջիկ, գնա՛ առաջ, մի՛ վախիլ,
Бледный դեմքրդ, սիրուն խոսքրդ ովի՞ն ասես չեն խաբիլ:
Տարիներրդ ակոս ձրգեց քու շնորհալի երեսին,
Վրնաս չի կա, подруг-ներդ դորա համար ճար ունին.
Երբ որ տանն ես՝ մի՛ հրամայիլ տրղոց քեզի մոտենալ,

Դուրս գնալիս՝ лик–իդ ձրգե՛ դու կրրկնածալ հաստ вуаль
Հարցնողներից ուշի-ուշով ծածկե՛ տարիդ ծրնրնդյան,
Ու ամենին հավատացո՛ւր, որ տասնութ ես տարեկան: